



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. հունիսին /վերլուծություն/

2011թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16954 գործարքներ, որոնց քանակը 2011թ. մայիսի համեմատ աճել է 1.9%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ՝ 8.6%-ով:

2011թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4260 օտարման գործարքների 76.8%-ը կազմել են առուվաճառքները, 22.8%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.5%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. հունիսին, 2011թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 4.8%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ՝ 6.8%-ով:

2011թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. հունիսին, 2011թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.5%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ աճել՝ 8.2%-ով:

2011թ. հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2010թ.	հունիս 2011թ.	մայիս 2011թ.
Կենտրոն	478100	441000	443900
Արաբկիր	395500	342000	342500
Քանաքեռ-Զեյթուն	294300	262700	264300
Նոր-Նորք	246200	223800	226700
Ավան	249900	236700	235500
Էրեբունի	259900	234400	231900
Ծեռգավիթ	263800	227000	231400
Դավթաշեն	281400	261400	258200
Աջափնյակ	242300	225600	227700
Մալաթիա-Սեբաստիա	253400	221100	222900
Նուբարաշեն	147800	148700	147000
Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/	283000	256800	257500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. հունիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. մայիսի համեմատ, նվազել են 0.3%-ով:

2011թ. հունիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 330 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. մայիսի համեմատ, աճել է 4.8%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ նվազել՝ 10.8%-ով:

2011թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2010թ.	հունիս 2011թ.	մայիս 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	142700	130100	129700
	Ապարան	45800	50300	49500
	Թալին	53900	62800	61100
Արարատ	Արտաշատ	98000	97500	98400
	Մասիս	133900	116800	121000
	Վեդի	96500	94200	93000
	Արարատ	86600	79500	80200
Արմավիր	Վաղարշապատ	166000	141100	140800
	Արմավիր	125400	120200	121800
	Մեծամոր	85000	84450	84450
Գեղարքունիք	Սևան	98400	90400	91990
	Գավառ	47300	51000	49600
	Մարտունի	86200	90200	89500
	Վարդենիս	33200	35800	34700
	Ճամբարակ	19900	22800	22200

Լոռի	Վանաձոր	96200	90450	90300
	Ստեփանավան	58200	68800	67200
	Սպիտակ	80700	89200	87300
	Այավերդի	32500	35100	36500
	Տաշիր	36100	42900	42100
	Թումանյան	6100	12500	12500
	Շամլուղ	3400	8300	8000
	Ախթալա	14200	19700	18600
Կոտայք	Աբովյան	162800	141650	138200
	Նոր Հաճն	131500	120400	123200
	Բյուրեղավան	106400	107500	107500
	Եղվարդ	115900	104400	102700
	Հրազդան	65100	61300	57800
	Ծաղկաձոր	181500	186200	185200
	Չարենցավան	82000	74300	73200
Շիրակ	Գյումրի	123800	106100	105700
	Արթիկ	61300	66900	64200
	Մարալիկ	30800	34600	33800
Սյունիք	Գորիս	139600	124800	126000
	Կապան	100000	103000	104200
	Սիսիան	81100	90200	90200
	Մեղրի	60000	68500	67700
	Ագարակ	33900	39700	38500
	Քաջարան	60600	69600	67300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	72300	81300	79400
	Եղնիզաձոր	108200	109200	108000
	Ջերմուկ	116500	122300	121100
Տավուշ	Դիլիջան	106900	105800	106400
	Իջևան	142800	127100	128300
	Բերդ	42200	49700	48200
	Նոյեմբերյան	33900	40200	39100
	Այրում	24100	28400	27200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. մայիսի համեմատ, աճել են 0.6%-ով:

2011թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 406 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 120, մարզերում միասին վերցրած՝ 286: 2011թ. հունիսին, 2011թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 12.1%-ով, ընդ որում Երևանում՝ 4.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 15.1%-ով: 2010թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.7%-ով, ընդ որում Երևանում աճել է 3.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 3.7%-ով:

2011թ. հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2010թ.	հունիս 2011թ.	մայիս 2011թ.
Կենտրոն	488700	461000	463500
Արաբկիր	405400	372200	372700
Քանաքեռ Զեյթուն	297000	274000	275500
Նորք Մարաշ	288100	284100	280400

Ավան	256000	242900	241600
Էրևբունի	264000	241600	239000
Շենգավիթ	269900	237000	241500
Դավթաշեն	288600	274900	271500
Աջափնյակ	251900	238200	240400
Մալաթիա Սեբաստիա	255600	231100	233000
Նուբարաշեն	149100	149900	148200
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	292200	273400	273400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. հունիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. մայիսի համեմատ մնացել է անփոփոխ:

2011թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2010թ.	հունիս 2011թ.	մայիս 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	150500	134200	133600
	Ապարան	50900	51700	50900
	Թալին	58000	64000	62200
Արարատ	Արտաշատ	102500	104000	104900
	Մասիս	138100	120600	124800
	Վեդի	101000	96900	95600
	Արարատ	93700	82000	82500
Արմավիր	Վաղարշապատ	171900	159600	159200
	Արմավիր	129500	123700	125200
Գեղարքունիք	Սևան	101100	94200	96000
	Գավառ	51900	52300	50600
	Մարտունի	90700	91200	90300
	Վարդենիս	36200	39000	37800
	Ճամբարակ	22700	25600	24900
Լոռի	Վանաձոր	101400	98200	99700
	Ստեփանավան	63200	69300	67700
	Սպիտակ	84600	96100	94000
	Ալավերդի	36200	35800	37200
	Տաշիր	40300	46200	45500
	Թումանյան	10800	13000	12900
	Շամլուղ	7500	9700	9300
	Ախթալա	18200	20800	19600
Կոտայք	Աթոլյան	174400	149300	145600
	Նոր Հաճն	136600	128000	131200
	Բյուրեղավան	109800	109300	109300
	Եղվարդ	128800	110000	107900
	Հրազդան	68800	64800	62800
	Ծաղկաձոր	315600	306500	305000
	Չարենցավան	84200	76200	75000
Շիրակ	Գյումրի	127600	117000	116400
	Արթիկ	64500	68900	65200
	Մարալիկ	33500	37000	36200

Սյունիք	Գորիս	145300	134000	134300
	Կապան	105700	105000	106200
	Սիսիան	85800	92300	91000
	Մեղրի	62900	69500	68600
	Ագարակ	36000	41300	40000
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	77100	83000	80000
	Եղեգնաձոր	115800	117100	115000
	Ջերմուկ	122500	125600	122800
Տավուշ	Դիլիջան	113000	108200	107600
	Իջևան	146800	136400	137700
	Բերդ	45000	52000	49600
	Նոյեմբերյան	36500	42600	39600
	Այրում	26000	29200	27900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. մայիսի համեմատ, աճել են 0.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 1419 միավոր /593.65 հա/ հողեր, որից Երևանում՝ 73 միավոր /6.29 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 715 միավոր /522.08 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.26 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 485 միավոր /42.99 հա/, որից Երևանում՝ 65 միավոր /4.16 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 169 միավոր /12.54 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /1.34 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 15 միավոր /7.29 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.53 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 28 միավոր /8.19 հա/ ,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 7 միավոր /0.56 հա/:

2011թ. հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1239 միավորի /491.45 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 62 միավոր /5.59 հա/, նվիրատվության գործարքներ՝ 166 միավորի /90.87 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /0.70 հա/ և փոխանակության գործարքներ՝ 14 միավորի /11.33 հա/:

Հանրապետությունում 2011թ. հունիսին, 2010թ. հունիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.6%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 2.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 15.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 111.75 հա, որից 102.05 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 21.8%-ը կամ 270 գործարքներ /98.59 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 3 գործարք /0.75 հա/, իսկ 77.8%-ը կամ 964 միավորը /391.17 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 59 միավոր /4.84 հա/: 2011թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 5 գործարք /1.69 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող

տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սնփականություն հանդիսացող								Մասնավոր սնփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	2	0.53	0	0.00	1	0.22	1	0.10	0	0.00	56	3.62	2	1.12
Արագածոտն	6	21.03	0	0.00	7	0.87	10	1.73	52	31.31	2	0.24	26	3.81	2	0.11
Արարատ	6	16.71	1	0.005	23	1.89	7	0.06	50	85.34	1	4.00	45	3.60	7	0.14
Արմավիր	8	21.94	0	0.00	1	0.04	8	0.26	58	49.00	0	0.00	46	4.21	8	1.06
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	1	0.06	18	0.93	73	28.85	0	0.00	9	0.93	6	0.33
Լոռի	2	0.52	2	0.03	2	0.04	11	0.23	55	32.84	0	0.00	26	3.37	9	0.12
Կոտայք	19	10.94	4	1.44	25	1.72	14	0.85	195	65.23	0	0.00	99	8.29	13	0.60
Շիրակ	0	0.00	0	0.00	5	0.30	14	0.48	20	21.79	0	0.00	14	1.50	3	1.15
Սյունիք	1	3.05	3	1.05	3	0.12	4	0.02	25	26.87	0	0.00	10	1.11	5	0.09
Վայոց Ձոր	6	3.35	0	0.00	13	1.57	9	0.51	9	0.90	0	0.00	5	0.36	3	0.17
Տավուշ	3	2.86	0	0.00	7	0.41	4	1.25	10	3.23	0	0.00	7	0.40	1	0.002
Ընդամենը	51	80.40	12	3.05	87	7.02	100	6.54	548	345.46	3	4.24	343	31.20	59	4.89

Ստորև ներկայացվում է 2011թ. հունիսին պետական կամ համայնքային սնփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	3	0.75	2	0.53	0	0.00	1	0.22	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	22	23.62	6	21.03	0	0.00	7	0.87	9	1.72
Արարատ	3	0.02	0	0.00	1	0.01	2	0.01	34	18.64	6	16.71	1	0.005	22	1.87	5	0.05
Արմավիր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	16	22.24	8	21.94	0	0.00	1	0.04	7	0.26
Գեղարքունիք	1	0.06	0	0.00	1	0.06	0	0.00	18	0.93	0	0.00	0	0.00	0	0.00	18	0.93
Լոռի	5	0.055	1	0.01	2	0.04	2	0.005	12	0.76	2	0.52	1	0.02	0	0.00	9	0.22
Կոտայք	13	1.16	0	0.00	7	0.63	6	0.53	40	9.83	10	6.98	4	1.44	18	1.09	8	0.32
Շիրակ	2	0.022	0	0.00	1	0.02	1	0.002	17	0.76	0	0.00	0	0.00	4	0.28	13	0.48
Սյունիք	2	1.01	2	1.01	0	0.00	0	0.00	9	3.22	1	3.05	1	0.03	3	0.12	4	0.02
Վայոց Ձոր	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	26	5.37	5	3.29	0	0.00	13	1.57	8	0.51
Տավուշ	3	0.12	0	0.00	3	0.12	0	0.00	11	4.41	3	2.86	0	0.00	4	0.30	4	1.25
Ընդամենը	35	3.21	5	1.55	15	0.88	15	0.78	205	89.78	41	76.38	7	1.50	72	6.14	85	5.76

Հանրապետությունում 2011թ. հունիսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 10 գործարք /4.02 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. հունիսին, 2010թ. հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 12.9%-ով: Ընդ որում, Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 12.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 33.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 33.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 14.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 12.5%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	21.03	177.0	4668.9	1726.6	39	19.00	365.0	12000.0	4285.0
Ապարան						4	2.43	86.5	2727.3	635.5
Թալին						8	5.76	93.6	5494.5	557.7
Ծաղկահովիտ								79.5	1000.0	210.1
Արարատի մարզ										
Արտաշատ						14	4.49	335.1	10833.3	2551.6
Մասիս	6	16.71	65.2	1008.1	319.6	10	3.93	200.0	11904.8	2885.2
Վեդի						26	76.93	207.0	10795.1	1730.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	2.12	63.1	63.1	63.1	29	24.64	294.3	9090.0	1516.7
Բաղրամյան	5	18.70	67.5	72.2	70.5	7	15.33	90.6	2561.1	770.0
Վաղարշապատ	2	1.12	402.5	402.8	402.7	22	9.03	444.4	11764.7	2922.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						69	15.55	199.8	1875.0	378.9
Ճամբարակ								60.5	953.3	320.0
Մարտունի								51.1	2850.0	705.5
Սևան						1	1.20	52.2	2134.8	293.5
Վարդենիս						3	12.09	41.2	2575.1	377.8
Լոռու մարզ										
Այվերդի						15	6.38	170.4	6424.2	778.4
Գուգարք	2	0.52	976.9	1010.0	993.5	8	2.98	234.6	6065.9	855.5
Սպիտակ						1	0.32	250.0	5555.5	693.5
Ստեփանավան						4	5.22	90.6	1686.6	283.5
Տաշիր						14	13.12	45.3	1384.4	145.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	0.26	495.0	4287.5	1775.3	98	14.47	279.3	11942.7	4762.5
Եղվարդ	2	4.48	333.5	401.5	367.5	60	35.03	174.4	11971.8	3300.0
Հրազդան	5	2.25	150.6	5155.5	2116.1	24	7.91	130.5	10256.4	2075.2
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	5.54	252.0	1693.1	598.5
Ամասիա						2	4.38	40.9	261.0	133.8
Անի						3	3.15	110.6	546.9	355.4
Աշոցք						8	6.33	58.5	215.8	112.5
Արթիկ						3	2.40	79.4	1428.6	335.5
Սյունիքի մարզ										
Գորիս						8	11.43	92.6	1023.2	635.5
Կապան	1	3.05	494.5	494.5	494.5	3	1.12	120.0	841.6	321.3
Մեղրի						3	0.51	193.0	3000.0	690.0
Սիսիան						11	13.81	46.3	1977.4	432.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	1.29	81.0	663.8	370.7	6	0.55	125.0	10000.0	1810.0
Վայք	1	2.00	71.9	71.9	71.9	3	0.35	58.8	1430.7	563.3

Տախտի մարզ										
Բերդ						5	2.13	213.3	3783.8	635.0
Իջևան	3	2.86	3267.0	9600.0	5378.0	2	0.32	267.5	9454.5	1200.0
Նոյնմբերյան						3	0.79	46.7	7368.4	860.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատնաքննից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	7	8705.0	175.2	213.6	202.7	16	15464.0	130.7	22200.0	2572.1
Ապարան						8	18950.0	124.1	609.6	330.2
Թալին						2	3700.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ								60.0	214.3	85.0
Արարատի մարզ										
Արտաշատ	2	2000.0	357.0	357.0	357.0	2	2060.0	173.9	7140.3	894.0
Մասիս	20	16864.0	1253.1	1267.0	1258.9	36	27910.0	187.5	25000.0	1212.7
Վեդի						7	5980.0	126.1	5000.0	662.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	400.0	3381.0	3381.0	3381.0	13	9907.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան						6	7550.0	100.0	833.3	224.3
Վաղարշապատ						26	23467.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	2342.0	186.6	1084.3	580.0
Ճամբարակ						1	1617.0	71.3	2286.2	149.3
Մարտունի						5	5291.0	119.3	5000.0	276.1
Սևան								240.0	3110.4	281.0
Վարդենիս								72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի						6	7830.0	114.3	1388.9	215.3
Գուգարք						5	7122.0	77.9	14083.3	972.5
Մալիտակ						10	12943.0	104.9	1348.3	200.0
Ստեփանավան						3	2990.0	88.2	1666.7	174.4
Տաշիր						1	1170.0	45.3	400.0	87.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	12	6747.7	642.0	4976.9	3515.5	44	38213.8	264.5	35353.5	1975.4
Եղվարդ	5	3356.0	4425.0	5100.9	4815.2	48	38183.0	173.6	27000.0	2840.0
Հրազդան	1	800.0	2977.5	2977.5	2977.5	5	5210.0	117.7	34848.5	1323.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	2821.0	246.4	3150.0	1174.3	5	1463.5	113.6	18750.0	331.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						2	2171.0	67.9	180.6	150.1
Աշոգք						3	6610.0	40.8	144.0	61.0
Արթիկ						4	4719.0	111.8	5000.0	216.5

Սյունիքի մարզ										
Գորիս						4	4151.0	112.2	1700.0	369.1
Կապան	1	111.6	3542.9	3542.9	3542.9	2	2462.0	67.9	2638.9	285.3
Մեղրի	1	496.0	605.2	605.2	605.2	1	3720.0	68.5	632.9	180.0
Սիսիան	1	620.0	303.6	303.6	303.6	3	724.0	123.5	875.0	190.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	13	15722.0	255.3	272.5	264.0	4	3152.0	96.7	7659.6	497.2
Վայք								120.7	1448.3	192.3
Տավուշի մարզ										
Բերդ						1	740.0	75.8	810.0	103.5
Իջևան	4	2977.0	3000.0	3000.0	3000.0	5	2233.0	74.1	14423.1	507.8
Նոյնեմբերյան								125.0	1948.1	205.5

2011թ. հունիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք 0.15 հա մակերեսով Կոտայքի մարզում:

2011թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 751 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 90.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. հունիսին, 2011թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 3.8%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ՝ 30.7%-ով:

2011թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 51 բնակարանների, 24 անհատական բնակելի տների, 361 հասարակական, 58 արտադրական նշանակության օբյեկտների, 246 միավոր /2051.99 հա/ հողերի և 11 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. հունիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքների /այդ թվում 1 միավոր՝ 0.002 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. մայիսի համեմատ նվազել է 65.2%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ՝ 52.9%-ով: 2011թ. հունիսին հանրապետությունում վարձակալված 2051.99 հա հողերից 0.88 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2051.11 հա հողերից 11.42 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.57 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 1424.32 հա, որից 1423.36 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. հունիսին հանրապետության մարզերում վարձակալվել են 2034.81 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. հունիսին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	7	12.68
Արարատ	11	426.00
Արմավիր	1	8.00
Գեղարքունիք	18	40.49
Լոռի	25	1423.36
Կոտայք	1	1.52
Շիրակ	5	11.78
Սյունիք	23	108.21
Վայոց Ձոր	9	1.79
Տավուշ	3	0.98
Ընդամենը	103	2034.81

2011թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2367 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. մայիսի համեմատ, նվազել է 8.5%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ աճել՝ 9.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.8%/, առանձնատների /25.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.7%/ և հողերի /10.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1103 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. մայիսի համեմատ, աճել է 0.4%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ՝ 6.4%-ով:

2011թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 236.66 հա հողեր, որից 113.55 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 47.1%-ը կամ 111.47 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 42.87 հա, որից 40.15 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. հունիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 211 գործարքներ, որից 159-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 83.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.3%-ն՝ անհատական բնակելի տների, 1.4%-ը՝ այգետնակների և 0.9ական%՝ հասարակական նշանակության օբյեկտների և հողերի նկատմամբ: 2011թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը մնացել է անփոփոխ, ընդ որում Երևանում աճել է 12.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 25.7%-ով: 2010թ. հունիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 26.3%-ով, ընդ որում Երևանում՝ 37.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 2.0%-ով:

2011թ. հունիսին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2840 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. մայիսի համեմատ աճել է 7.2%-ով, իսկ 2010թ. հունիսի համեմատ՝ 23.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /25.7%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե